Հաճախ Տրվող Հարցեր (FAQs)

Կապիկի Ծաղիկ (Monkeypox)

1. Ի՞նչ է կապիկի ծաղիկ հիվանդությունը

Կապիկի ծաղիկը հազվադեպ հանդիպող հիվանդություն է, որն առաջանում է կապիկի ծաղիկ վիրուսով վարակվելու հետևանքով: Այն սովորաբար չի հանդիպում Միացյալ Նահանգներում: Այնուամենայնիվ, վերջերս մի քանի երկրներում, ներառյալ Լոս Անջելեսի Շրջանում, որտեղ սովորաբար կապիկի ծաղիկ հիվանդության դեպքեր չեն արձանագրվում, արձանագրվել են կապիկի ծաղիկի բազմաթիվ դեպքեր:

2. Ինչպե՞ս է տարածվում կապիկի ծաղիկ հիվանդությունը

Կապիկի ծաղիկը փոխանցվում է, երբ մարդը շփվում է վիրուսակիր կենդանու կամ մարդու հետ: Այն կարող է տարածվել մարմնի հեղուկների և կապիկի ծաղիկի վարակի վերքերի հետ շփման միջոցով, մարմնի հեղուկներով կամ վերքերից աղտոտված նյութերի հետ շփման միջոցով (օրինակ՝ հագուստ կամ սպիտակեղեն), սեռական հարաբերության ժամանակ կամ շնչառական կաթիլների միջոցով՝ երկարատև դեմառդեմ շփման դեպքում: Վիրուսը կարող է փոխանցվել սեռական հարաբերության ընթացքում մաշկ-մաշկ շփման և այլ սերտ շփումների միջոցով:

3. Որո՞նք են կապիկի ծաղիկ հիվանդության նշանները

Վաղ նշանները կարող են ներառել ջերմություն, թուլություն (ընդհանուր անհանգստություն), գլխացավ, ավշային հանգույցների այտուց և երբեմն հազ կամ կոկորդի ցավ: Այլ ախտանիշները ներառում են մկանային ցավեր, մեջքի ցավ, դող և սաստիկ հոգնածություն, որոնց հաջորդում է ցանը, որը սովորաբար առաջանում է դեմքին և տարածվում մարմնի այլ մասեր: Վարակները կարող են տևել երկուսից չորս շաբաթ; Իսկ որոշ մարդկանց մոտ ցանը կարող է առաջանալ սեռական օրգանների շրջանում՝ ավշային հանգույցների այտուցման հետ միասին կամ առանց այտուցման:

4. Ինչպե՞ս է այն բուժվում

Ներկայումս չկա կապիկի ծաղիկ հիվանդության հասանելի հատուկ բուժում: Դեղամիջոցները կարող են օգտագործվել՝ թեթևացնելու համար հիվանդության ախտանիշները: Որոշ դեպքերում կարող է կատարվել պատվաստում՝ վիրուսի հետ բարձր վտանգավորության շփումից հետո հիվանդությունը կանխելու համար:

5. Ինչպե՞ս կարող եք կանխել կապիկի ծաղիկը

Կապիկի ծաղիկ հիվանդության կանխարգելմանն ուղղված քայլերը ներառում են՝

- Խուսափել այնպիսի նյութերի հետ շփումից, ինչպիսիք են անկողնային պարագաները և հագուստեղենը, որոնց հետ շփվել է հիվանդ կենդանին կամ այս վիրուսով վարակված անձը
- Խուսափել այն մարդկանցից, որոնք կարող են վարակված լինել կամ վարակված են վիրուսով
- Խուսափել այն կենդանիների հետ շփումից, որոնք կարող են վարակված լինել վիրուսով (օրինակ՝ հիվանդ կամ սատկած կենդանիներ)
- Լվանալ ձեռքերը օճառով և ջրով կամ օգտագործել ալկոհոլային հիմքով ձեռքերի ախտահանիչ՝ վարակված կենդանիների կամ մարդկանց հետ շփվելուց հետո:

Չկա հատուկ բուժում, որը հաստատված է այս վիրուսի բուժման համար, սակայն կարող են տրվել դեղամիջոցներ՝ ախտանիշները մեղմելու համար: Սակայն կա պատվաստանյութ, որը կարող է կիրառվել որոշ հանգամանքներում՝ կանխելու կապիկի ծաղիկ հիվանդությունը մարդկանց մոտ՝ ելնելով վիրուսի հետ շփման մակարդակից:

6. Ի՞նչ է այս պահին տեղի ունենում կապիկի ծաղիկի հետ

Տվյալ պահին կա միջազգային բռնկում, որը կապված չէ կենդանիների կամ այնպիսի վայր ճանապարհորդության հետ, որտեղ այս հիվանդությունն ավելի տարածված է: ԱՄՆ-ի բազմաթիվ տարածքներում հայտնաբերվել են դեպքեր, ներառյալ Կալիֆորնիայում հայտնաբերված դեպքերը: Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչությունը հետևում է այս իրավիճակին և նախազգուշացնում է բժշկական ծառայություններ իրականացնողներին, իսկ CDC-ն հետևում է խմբակային վարակման դեպքերին: Լոս Անջելեսի Շրջանում կապիկի ծաղիկ հիվանդության վերաբերյալ ամենավերջին տեղեկությունների համար այցելեք ph.lacounty.gov/media/Monkeypox/ կայքէջ:

7. Ի՞նչ պետք է անեմ, եթե կարծում եմ, որ վարակվել եմ կապիկի ծաղիկ հիվանդությամբ

Խնդրում ենք կապ հաստատել ձեզ բժշկական ծառայություններ մատուցողի հետ, եթե կարծում եք, որ ունեք կապիկի ծաղիկ հիվանդության նշաններ կամ ախտանիշներ:

Կարևոր Տեղեկություններ

- Կապիկի ծաղիկը հեշտությամբ չի փոխանցվում մի մարդուց մյուսին:
- Ներկայումս չկա հատուկ բուժում, որը հաստատված է կապիկի ծաղիկ վիրուսի դեմ, սակայն որոշ դեղամիջոցներ կարող են օգտագործվել ախտանիշները մեղմելու համար:
- Կապիկի ծաղիկը կանխելու համար խուսափեք այն կենդանիների կամ մարդկանց հետ շփումից, որոնք կարող են կրել վիրուսը, խուսափեք այնպիսի նյութերի հետ շփումից, որոնք շփվել են հիվանդ կենդանու կամ մարդու հետ և վարակված կենդանիների կամ մարդկանց հետ շփվելուց հետո ապահովեք ձեռքերի լավ հիգիենա:

Որտեղի՞ց կարող է հանրությունը ավելի շատ տեղեկություններ ստանալ

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչություն
Կապիկի Ծաղիկ
ph.lacounty.gov/media/Monkeypox/

Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոններ
Կապիկի Ծաղիկ
cdc.gov/poxvirus/monkeypox/index.html

County of Los Angeles Public Health

Կապիկի Ծաղիկ (Monkeypox)

8. Ինչպե՞ս պետք է թեստավորվեմ կապիկի ծաղիկի համար

Խնդրում ենք կապ հաստատել ձեզ բժշկական ծառայություններ մատուցողի հետ, եթե կարծում եք, որ վարակված եք կապիկի ծաղիկի վիրուսով: Զանգահարեք 2-1-1, եթե չունեք բժշկական ապահովագրություն կամ բժշկական ծառայություններ տրամադրող: Կարող եք նաև այցելել Հանրային Առողջության Վարչության՝ Սեռական Առողջության ցանկացած Կլինիկա: